ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

№ /32 24.01.2020թ.

«Իրազեկ Քաղաքացիների Միավորում»
ՀԿ-ի լրագրող՝ Սևադա Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան,

ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ Դ.Անհաղթի և Ռուբինյանց փողոցներին հարակից 14.405 քմ ընդհանուր մակերեսով «Շատրվաններ» զբոսայգին Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ավագանու 08.04.2006թ. թիվ 24 որոշմամբ 50 /հիսուն/ տարի ժամկետով տրամադրվել է քաղ. Աշոտ Տոնոյանին:

17.04.2006թ.-ին կնքվել է հ.1988 վարձակալության պայմանագիր՝ մի կողմից՝ Երևան քաղաքի «Քանաքեռ-Զեյթուն» համայնքի, ի դեմս համայնքի ղեկավար Ա.Քոթանջյանի, մյուս կողմից՝ քաղաքացի Աշոտ Տոնոյանի՝ Դ. Անհաղթի և Ռուբինյանց փողոցներին հարակից գտնվող 14.405 քմ ընդհանուր մակերեսով «Շատրվաններ» զբոսայգին 50 /հիսուն/ տարի ժամկետով տրամադրելու վերաբերյալ: Նշված պայմանագիրը ստացել է պետական գրանցում (վարձակալության վկ. 03.05.2006թ. թիվ 2099694):

2012թ.-ին Վարձակալը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Դ.Անհաղթի արձանի մոտ գտնվող «Շատրվաններ» զբոսայգու տարածքի վարձակալության իրավունքն այլ անձի փոխանցելու խնդրանքով:

Երևանի քաղաքապետ Տ.Մարգարյանի 16.10.2012թ. N6850-Ա որոշմամբ՝ Աշոտ Տոնոյանին թույլատրվել է Դ. Անհաղթի արձանի մոտ գտնվող «Շատրվաններ» զբոսայգու 17.04.2006թ.-ին կնքված հ.1988 վարձակալության պայմանագրով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել «Սփեյս Գրուպ» ՍՊԸ-ին:

20.11.2012թ.-ին կնքվել է իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում գույքային իրավունք ներդնելու մասին պայմանագիր՝ մի կողմից՝ Աշոտ Տոնոյանի, մյուս

կողմից՝ «Սփեյս Գրուպ» ՍՊԸ-ի, ի դեմս ընկերության տնօրեն Արթուր Աղաբեկյանի: Նշված պայմանագիրը ստացել է պետական գրանցում:

Ներկայումս «Սփեյս Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն է հանդիսանում քաղաքացի Տիգրան Գալստյանը:

Տեղեկացնենք նաև, որ Դ.Անհաղթի և Ռուբինյանց փողոցների հարակից տարածքում, մասնավորապես՝ Դրոյի փողոց 2 և Դրոյի փողոց 2/3 հասցեներում գտնվող 0.039295 հա հողատարածքի նկատմամբ 10.07.2012թ.-ին գրանցվել է «Լայֆ Գրուպ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքը:

Դրոյի 2/3 հասցեի կադաստրային արժեքը՝ 45.550.008 դրամ է:

Դրոյի 2 հասցեի կադաստրային արժեքը՝ 27.115.525 դրամ է :

«Սփեյս Գրուպ» ՍՊԸ-ի տարեկան վարձակալության արժեքը կազմում է 750.000 դրամ: